Արձանագրություն N 5

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով երկու փուլով մրցույթի գնահատող հանձնաժողովի՝ առաջին փուլի հրավերի վերաբերյալ պարզաբանում ներկայացնելու մասին նիստի

ք. Երևան

«15» օգոստոսի 2023թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Վ. Հարությունյան - ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ

Անդամներ

Ա. Արամյան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ,

Թ. Ղալայան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի պետ,

Ա. Հովակիմյան - ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի փորձագետ,

Գ. Ասլանյան - ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տնտեսական վարչության պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ,

Ս. Սահակյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ,

Կ. Գրիգորյան- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կապի և փոստի վարչության կապի բաժնի պետ,

Ն. Փահլևանյան - ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ,

Գ. Կարապետյան - «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի գնումների բաժնի պետ,

Լ. Բոյաջյան - «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ,

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Ա. Այվազյան - ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության պաշտոնական այցերի բաժնի պետի պաշտոնակատար,

Ա. Հարությունյան - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ,

Ք. Հարությունյան - ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ,

Ս. Հակոբյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հաստատել և ներկայացնել հրավերի վերաբերյալ պարզաբանումը
2. Հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը
3. Այլ ընթացիկ հարցեր

Ընդունվել է որոշում. կողմ՝ 10, դեմ՝ 0:

2. Առաջին փուլի հրավերի վերաբերյալ պարզաբանման մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում

Որոշեց.

1. հաստատել և տրամադրել «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով ընթացակարգի առաջին փուլի հրավերի վերաբերյալ 2023 թվականի օգոստոսի 10-ին ստացված հարցման վերաբերյալ պարզաբանումը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 10, դեմ՝ 0:

3.Այլ ընթացիկ հարցեր

1. Հանձնաժողովն արձանագրեց, որ քանի որ 2023 թվականի օգոստոսի 10-ին ստացված հարցմանը պարզաբանում տրամադրելու նպատակով օգոստոսի 11-ի ժ. 14:00-ին հրավիրված գնահատող հանձնաժողովի նիստը չի կայացել անդամների երկու երրորդի ներկայությունը չապահովվելու պայմաններում նիստի իրավազոր չլինելու պատճառով՝ գնահատող հանձնաժողովի անդամները ս.թ. օգոստոսի 11-ին առցանց քվեարկության միջոցով որոշում են կայացրել հայտերի ներկայացման վերջնաժամկետը 18.08.2023թ. ժ. 12:00-ի փոխարեն սահմանել 22.08.2023թ. ժ. 12:00-ն՝ ապահովելու համար պարզաբանումը տրամադրելուց հետո մասնակիցներին հայտ ներկայացնելու համար տրվող ժամանակը: Համապատասխան փոփոխությունը կատարվել է հրավերում և ուղարկվել մասնակիցներին ս.թ. օգոստոսի 12-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 10, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի ու վայրի մասին

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով ընթացակարգի առաջին փուլի հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստը տեղի կունենա սույն թվականի օգոստոսի 22-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 10, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Արամյան

_____ Թ. Ղալայան

_____ Ա. Հովակիմյան

_____ Գ. Ասլանյան

_____ Ս. Սահակյան

_____ Կ. Գրիգորյան

_____ Ն. Փահլևանյան

_____ Գ. Կարապետյան

_____ Լ. Բոյաջյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան

ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3 ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ ստացված հարցման ու պարզաբանման վերաբերյալ հայտարարություն

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3 ծածկագրով երկու փուլով մրցույթի երկրորդ փուլի հրավերի վերաբերյալ ստացել է հարցում: Հարցումը և ներկայացված պարզաբանումը ներկայացվում են ստորև.

Հարցում

մինչև սույն թվականի օգոստոսի 18-ը «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ կողմից հրավերով ներկայացված գնման առարկայի կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրերի վերաբերյալ (նկարագրերի առաջարկ) առաջարկներն առավել համակարգված ձևով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնելու, ինչպես նաև սպասվող միջոցառման տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակն առավել համապարփակ դարձնելու և դրանով իսկ Կատարողից (մրցույթում հաղթող ընկերություն) Պատվիրատուի ակնկալիքներն առավել հստակ և կոնկրետ ձևակերպելու նպատակով՝ խնդրում ենք հնարավորինս սեղմ ժամկետներում պատասխանել ստորև բերվող հարցադրումներին.

1. Հաշվի առնելով սպասվող միջոցառման մասշտաբը, կարևորությունը, ՎԶԵԲ-ի կողմից կազմված "REQUIREMENTS MANUAL"-ով սահմանված պահանջներում տեղ գտած կոնկրետ ստանդարտները, ինչպես նաև միջոցառման արարողակարգային և կոնֆերանսային ձևաչափը՝ ենթադրվում է արդյո՞ք, որ մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլում մրցույթի մասնակցի հայտի գնահատման հիմքում նախատեսվում է ավելի շատ շեշտը դնել ոչ թե Կատարողի (մրցույթում հաղթող ընկերության) կողմից Տեխնիկական առաջարկով ներկայացվելիք կրեատիվ/ ստեղծագործական էլեմենտների վրա (ինչպես օրինակ՝ բացման հանդիսավոր արարողություն, մշակութային ծրագրեր և այլն), այլ հատկապես միջոցառման լոգիստիկ և կազմակերպչական աշխատանքները հնարավորինս պատշաճ, անխափան, անվտանգ և բարձր մակարդակով իրականացնելուն ուղղված՝ Կատարողի (մրցույթում հաղթող ընկերության) կողմից Տեխնիկական առաջարկով ներկայացվելիք մոտեցումների,

լուծումների և կարողությունների վրա:

2. Արդյո՞ք ակնկալվում է, որ միջոցառման պանելային քննարկումներում ելույթ ունենալու համար Կատարողի (մրցույթում հաղթող ընկերության) կողմից պետք է առաջարկվեն միջազգային հեղինակություն ունեցող անհատների անուններ:

3. Ինչպե՞ս և ու՞մ կողմից են կազմակերպվելու արտերկրից ժամանող ՎՀԵԲ տարեկան հանդիպման մասնակիցների օդանավի տոմսերի ձեռքբերման, նրանց ապահովագրության, ինչպես նաև Երևանում հյուրանոցների ամրագրման գործընթացները: Եթե նշված ծառայությունները մատուցվելու են երրորդ կազմակերպության կողմից, ապա ցանկալի է Տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակում հստակ նշել այդ մասին:

4. Ո՞վ է հոգալու օդանավակայանի VIP սրահով ՎՀԵԲ տարեկան հանդիպման հատուկ հյուրերի դիմավորման և ճանապարհ դնելու, վերջիններիս ուղեբեռի սպասարկման ծախսերը:

5. Արդյո՞ք նախատեսվում է օդանավակայանի ժամանման սրահում առանձնացնել հատուկ անցուղի /line/՝ հատկապես պատվիրակությունների կազմով Երևան ժամանող ՎՀԵԲ տարեկան հանդիպման ոչ VIP հյուրերի անցագրային գործընթացն առավել արագ կազմակերպելու նպատակով: Եթե այո, ապա ո՞վ է հոգալու նման անցուղու սպասարկման ծախսերը:

6. Արդյո՞ք ակնկալվում է արտերկրից ժամանող և հատուկ պահպանության կարիք ունեցող անձանց մասնակցությունը սպասվող միջոցառմանը (օրինակ՝ Թուրքիայից, Ադրբեջանից կամ այլ երկրներից): Եթե այո, ապա նշվածի հետ կապված առանձնահատկությունները, ինչպես նաև Կատարողի (մրցույթում հաղթող ընկերություն) անելիքները ցանկալի է հստակեցնել նախապես:

7. Արդյո՞ք կան միջոցառման մասնակիցներին տեղափոխող տրանսպորտային միջոցների հետ կապված նվազագույն պահանջներ: Արդյո՞ք միջոցառման շրջանակներում ներգրավվող տրանսպորտային միջոցները նախատեսվում է կցել կոնկրետ հյուրերի՝ դրան զուգահեռ կազմակերպելով նաև խմբակային տեղափոխություններ՝ հյուրանոցներից միջոցառման անցկացման վայր և այլ ուղղություններով, թե՞ դիտարկվելու են տրանսպորտային միջոցների շահագործման այլ տարբերակներ ևս: Եթե այո, ապա ցանկալի է Տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակում հստակ նշել այդ մասին:

8. Արդյո՞ք կան միջոցառման մասնակիցներին սննդով ապահովման հետ կապված կոնկրետ պահանջներ, նախասիրություններ և առանձնահատկություններ: Եթե այո, ապա ցանկալի է Տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակում հստակ նշել այդ մասին:
9. Ինչպե՞ս և ու՞մ կողմից է կազմակերպվելու միջոցառման մասնակիցների բեյջերի դիզայնի, տպագրության և տրամադրման, ինչպես նաև միջոցառման անցկացման վայրում դրանց նույնականացման գործընթացները: Եթե նշված ծառայությունները մատուցվելու են երրորդ կազմակերպության կողմից, ապա ցանկալի է Տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակում հստակ նշել այդ մասին:
10. Ո՞վ է իրականացնելու տարեկան հանդիպման մասնակիցների առցանց գրանցման գործընթացը:
11. Հրավերի Տեխնիկական բնութագրի նախնական տարբերակով սահմանվել է, որ Կատարողը պետք է ստեղծի հանդիպման կայք: Արդյո՞ք անհրաժեշտ կլինի նաև ստեղծել համապատասխան բջջային հավելված, թե նախատեսվում է օգտագործել արդեն իսկ առկա MyEBRD բջջային հավելվածը: Եթե նոր բջջային հավելված չի ստեղծվելու, ապա ո՞վ է շահագործելու առկա MyEBRD բջջային հավելվածը:
12. Ու՞մ կողմից են ձեռք բերվելու տարեկան հանդիպմանը մասնակցող ՎԶԵԲ անձնակազմին տրամադրվելիք առնվազն 100 բջջային հեռախոսներն ու հեռախոսահամարները:
13. Ո՞վ է հոգալու միջոցառման անցկացման ամսաթվից շուրջ 6 ամիս առաջ ՀՀ ժամանող ՎԶԵԲ լոգիստիկ թիմի և վերջիններիս ուղեկցող անձանց (այդ թվում՝ թարգմանիչների) կեցության և այլ (այդ թվում՝ վերջիններիս տրամադրվելիք 20 հեռախոսների և հեռախոսահամարների ձեռքբերման հետ կապված) ծախսերը:
14. Արդյո՞ք ակնկալվում է Կատարողի (մրցույթում հաղթող ընկերության) կողմից միջոցառման առաջխաղացման և գովազդային արշավների կազմակերպում (թե՛ Երևան քաղաքում, թե՛ մարզերում, թե՛ տարբեր սոցիալական հարթակներում), ներառյալ՝ համապատասխան քանակի պաստառների դիզայն, տպագրություն և տեղադրում, գովազդային նյութերի պատրաստում և տեղադրում էլեկտրոնային և այլ կրիչների վրա, ինչպես նաև տեսահոլովակների և այլ անիմացիոն նյութերի պատրաստում և մոնտաժ: Եթե այո, ապա ցանկալի է Տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակում հստակ նշել

այդ

մասին:

15. Արդյո՞ք ակնկալվում է տարեկան հանդիպման անցկացման համար համալիրում նախատեսվելիք սրահներից բացի՝ Կատարողի (մրցույթում հաղթող ընկերության) կողմից միջոցառման անցկացման ամբողջ վայրի բրենդային ձևավորման և համապատասխան (այդ թվում՝ տեխնիկական) կահավորման իրականացում (համալիրի շրջակայքի թվով 33 փոքր դրոշակաձողեր, համալիրի ֆասադային մասին հարող աջ և ձախ մեծ 12-ական դրոշակաձողեր, համալիրի ֆասադային հատվածի 2-րդ և 5-րդ հարկեր, գլխավոր մուտքին հարող պատեր, գլխավոր մուտքի դռներ և պատուհաններ, նախամուտք /ֆոյե/, նախամուտքի աջ և ձախ հատվածի շարժասանդուղքներ, աջ և ձախ հատվածի բուֆետային գոտիներ, դրանց վերևի հարկերի արտաքին ֆասադային հատվածներ և այլն): Եթե այո, ապա ցանկալի է Տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակում հստակ նշել այդ մասին:

16. Արդյո՞ք նախատեսվում է Կատարողի (մրցույթում հաղթող ընկերության) կողմից տարեկան հանդիպման շրջանակներում բացման հանդիսավոր արարողության և փակման գալա-ընթրիքի

կազմակերպում:

17. ՎԶԵԲ-ի կողմից կազմված "REQUIREMENTS MANUAL"-ի 11-րդ բաժնի 11.14-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է երկու հիմնական մուտքերի մոտ կազմակերպել համալիր մուտք գործող անձանց և նրանց մոտ առկա իրերի զննությունը: Արդյո՞ք ակնկալվում է, որ պայուսակների զննության /ռենտգեն/ սարքավորումների տեղադրումը պետք է իրականացվի Կատարողի (մրցույթում հաղթող ընկերության) կողմից:

18. Արդյո՞ք բացի միջոցառման ընթացքի նկարահանումից և ուղիղ հեռարձակումից, նախատեսվում է կազմակերպել նաև առցանց /Zoom, Teams, և այլն/ հանդիպում-քննարկումներ: Եթե այո, ապա ցանկալի է Տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակում հստակ նշել այդ մասին:

19. Արդյո՞ք նախատեսվում է միջոցառման շրջանակներում տպագրել և պատրաստել միջոցառման ժամանակ ելույթ ունեցողների անհատական անվանատախտակներ, ինչպես նաև պատրաստել և տեղադրել մասնակից երկրների և կազմակերպությունների դրոշներ /այդ թվում՝ լոգոյի տեսքով/՝ թե՛ սեղաններին դրվող տարբերակով, թե՛ որպես համալիրի արտաքին ձևավորում, թե՛ որպես բացման և լիագումար նիստերի դահլիճի ձևավորում և

այլն: Եթե այո, ապա ցանկալի է Տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակում հստակ նշել այդ մասին:

20. Արդյո՞ք ակնկալվում է միջոցառման կազմակերպման աշխատանքներում Կատարողի (մրցույթում հաղթող ընկերության) կողմից հստակ թվով կամավորների ներգրավում: Եթե այո, ապա կոնկրետ որ կազմակերպչական աշխատանքներում է նախատեսվում վերջիններիս ներգրավել (օդանավակայան, հյուրանոցներ, միջոցառման անցկացման վայր, մշակութային վայրեր և այլն):

Պարզաբանում

1. Առաջնային գնահատվելու են միջոցառման լոգիստիկ և կազմակերպչական աշխատանքները հնարավորինս պատշաճ, անխափան, անվտանգ և բարձր մակարդակով իրականացնելուն ուղղված աշխատանքների առաջարկները, սակայն գնահատվելու է նաև կրեատիվ/ ստեղծագործական էլեմենտները: Գնահատման չափանիշները կընդգրկվեն տեխնիկական բնութագրի վերջնկան տարբերակում:
2. Միջոցառման պանելային քննարկումներում ելույթ ունենալու նպատակով միջազգային հեղինակություն ունեցող անհատների պարտադիր ներկայություն չի ակնկալվում:
3. Նշված աշխատանքները չեն իրկանացվելու գնման գործընթացի հաղթող ճանաչված մասնակցի (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից:
4. Օդանավակայանի VIP սրահով ՎՋԵԲ տարեկան հանդիպման հատուկ հյուրերի դիմավորման և ճանապարհ դնելու, վերջիններիս ուղեբեռի սպասարկման ծախսերը պետք է հոգա Կազմակերպիչը:
5. Օդանավակայանում ՎՋԵԲ տարեկան հանդիպման ոչ VIP հյուրերի անցագրային գործընթացն առավել արագ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ աշխատանքների կատարման պատասխանատում Կազմակերպիչն է: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է ՀՀ ֆինանսների նախարարության կամ այլ պետական մարմինների աջակցություն:

6. Հատուկ պահպանության կարիք ունեցող անձանց մասով անհրաժեշտ առանձնահատկությունների ապահովումը չի մտնում Կազմակերպիչի գործառույթների մեջ:

7. Որոշ հյուրերի համար անհրաժեշտէ նախատեսել ներկայացուցչական դասի ավտոմեքենաներ, իսկ մանացած հյուրերի համար՝ ավտոբուսներ և միկրոավտոբուսներ:

Որոշ հյուրերին կցվելու են ավտոմեքենաներ, մնացածին՝ ոչ: Խմբակային տեղափոխությունները իրականացվելու են ավտոբուսներով և միկրոավտոբուցներով:

Մանրամասները կիստակեցվեն վերջնական տեխնիակական բնութագրում:

8. Սննդային նախասիրությունների տարբերությամբ պայմանավորված անհրաժեշտ է լինելու ապահովել սննդային բազմազանություն:

Մանրամասները կիստակեցվեն վերջնական տեխնիակական բնութագրում:

9. Միջոցառման մասնակիցների բեյջերի դիզայնի, տպագրության և տրամադրման աշխատանքները իրականացվելու են Կազմակերպիչի կողմից, իսկ միջոցառման անցկացման վայրում մասնակիցների նույնականացման գործընթացների իրականացման մանրամանսերը կիստակեցվեն վերջնական տեխնիակական բնութագրում:

10. Մասնակիցների առցանց գրանցման գործընթաց չի իրականացվելու Կազմակերպիչի կողմից:

11. Կազմակերպիչի կողմից նոր բջջային հավելվածի ստեղծում չի ակնկալվում: MyEBRD բջջային հավելվածը: սպասարկվելու է ՎԶԵԲ-ի կողմից:

12. ՎԶԵԲ անձնակազմին բջջային հեռախոսների և հեռախոսահամարների տրամադրումը իրականացվելու է Կազմակերպիչի կողմից:

Մանրամասները կիստակեցվեն վերջնական տեխնիակական բնութագրում:

13. Կազմակերպիչը չի ապահովում ՀՀ ժամանող ՎԶԵԲ լոգիստիկ թիմի և վերջիններիս ուղեկցող անձանց կեցության հարցերը: Հեռախոսների և հեռախոսահամանրեի տրամադրումը իրականացնում է Կազմակերպիչը:

Մանրամասները կիստակեցվեն վերջնական տեխնիակական բնութագրում:

14. Նշված աշխատանքները իրականացվելու են Կազմակերպիչի կողմից:

Մանրամասները կիստակեցվեն վերջնական տեխնիակական բնութագրում:

15. Մանրամասները կիստակեցվեն վերջնական տեխնիակական բնութագրում:

16. Կատարողի կողմից նախատեսվում է բացման հանդիսավոր արարողության և փակման գալա-ընթրիքի կազմակերպում:

Մանրամասները կհստակեցվեն վերջնական տեխնիկական բնութագրում:

17. Մանրամասները կհստակեցվեն վերջնական տեխնիկական բնութագրում:

18. Նախատեսվում է առցանց հանդիպումների կազմակերպում:

Մանրամասները կհստակեցվեն վերջնական տեխնիկական բնութագրում:

19. Նշված աշխատանքների իրականացվելու են կազմակերպիչի կողմից:

Մանրամասները կհստակեցվեն վերջնական տեխնիկական բնութագրում:

20. Կամավորների ներգրավում նախատեսվում է:

Մանրամասները կհստակեցվեն վերջնական տեխնիկական բնութագրում:

Հեռախոս՝ (+374) 11 800-114

Էլ. Փոստ՝ ani.aghababyan@minfin.am

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն